Հաստատված է՝
ՀԲԻ-ի ռեկտոր
28 .08.2013
Լ.Վ. Անդրիասյան

_____
(ստորագրություն)
Կ.Տ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

2013

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.

Սույն ուղեցույցի նպատակն է ներդնել ՀԲԻ-ում որակի ապահովման որոշակի համակարգ, որը, գնահատելով ինստիտուտի բոլոր բաժինների գործնեությունը, կներկայացնի այն խնդիրները, որոնց լուծումը կնպաստի ինստիտուտի առաքելության և հիմնական ռազմավառական նպատակների արդյունավետ իրականացմանը, նաև գործող համակարգերի որակի բարձրացմանը:

ՈԱ շրջանակներում որակի ապահովումը ոչ միայն որակի համար պատասխանատուների, այլ և ՀԲԻ բոլոր աշխատակիցների պատասխանատվությունն է՝ յուրաքանչյուր անձ պատասխանատու է մյուսների համար՝փոխհամագործակցելով միմյանց հետ: Որակի բարելավումը կատարվում է առաքելությանը և նպատակներին համաձայն ինստիտուտի գործընթացները գնահատելու միջոցով: ՈԱ շրջանակում գործընթացների յուրաքանչյուր փուլում ստուգում է կատարվում և հետադարձ կապ է ապահովվում ։ ՈԱ շրջանակներում կարևորվում է նաև ինքնավերլուծությունը, որպես որակի բարելավմանն և արդյունավետությանն ուղղված գործընթացների հիմնական և կարևոր մաս:

ՀԲԻ որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակար՝երը պետք է նպաստեն կրթության գերխնդրի իրագործմանը, կրթության որակի բարձրացմանը, օժանդակելով բուհի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանն ու վարչարարության նվազեցմանը, մրցունակության զար՝ացմանը և ուսանողակենտրոն ուսումնառության ներդրմանն ու բարելավմանը:

1. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1.1 Որակի ապահովման համակարգի կարգավորիչ փաստաթղթերը

Հայաստանում կրթության որակի հասկացության և որակի հավաստման նոր համակարգի ստեղծման քննարկումները սկսվել են Եվրախորհրդի “Որակի հավաստման իրավական շրջանակը Հարավային Կովկասի երկրներում.

Հայաստան, Վրաստան և Ադրբեջան” ծրագրից սկսած 2000 թվականից: Նշված ծրագրի շրջանակում մշակված ազգային զեկույցներում և 3 երկրների կրթության նախարարների համատեղ հռչակագրերում շեշտվում էր որակի հավաստման նոր համակարգի ստեղծման անհրաժեշտությունը, բուհերի կառավարման ժողովրդավարացումը (ժողովրդավարական սկզբունքների ներդրումը), ակադեմիական ազատությունները և ուսանողների մասնակցությունը որակի հավաստման գործընթացներին: Բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի գործունեության կարգավորիչ փաստաթղթերը ձևավորվել և մշակվել են Բոլոնիայի գործընթացի տարբեր փուլերում: Ստորև ներկայացվում են հիմնական ձևակերպումները.

• Բոլոնիայի հռչակագիրը սահմանում է ընդհանուր նպատակ /Բոլո նիա, 1999թ./. «Աջակցություն եվրոպական համագործակցությանը որակի ապահովման ասպարեզում՝ նկատի ունենալով համեմատելի չափանիշների և մեթոդաբանության զարգացումը»:

• Պրահայի հռչակագրում ձևակերպված են որոշակի հանձնարա րականներ /2001թ./. «Եվրոպայի կրթության նախարարները ճանաչեցին այն կենսական դերը, որն ունեն որակի ապահովման համակարգերը Եվրոպայում՝ որակի բարձր ստանդարտների հավաստման և որակավորումների համադրելիության դյուրացման գործում: Նրանք խրախուսեցին նաև ավելի սերտ համագործակցությունը փոխճանաչման և որակի ապահովման ցանցերի միջև: Նրանք շեշտեցին եվրոպական սերտ 10 համագործակցության և փոխադարձ վստահության անհրաժեշտությունը որակի ապահովման ազգային համակարգերի փոխընդունման համար: Ավելին, նրանք խրախուսեցին համալսարաններին և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ տարածելու լավագույն փորձի օրինակներ և ստեղծելու սցենարներ գնահատման և հավատարմագրման /հավաստագրման/ մեխանիզմների փոխադարձ ընդունման համար: Նախարարները կոչ արեցին համալսարաններին և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններին, ազգային գործակալություններին և Բարձրագույն Կրթության Որակի Հավաստման Եվրոպական Ցանցին (ՈՀԵՑ)՝ համատեղ աշխատել երաշխավորությունների ընդհանուր հենքի ստեղծման ուղղությամբ և տարածել լավագույն փորձը՝

համագործակցելով ՈՀԵՑ-ին չանդամագրված երկրների համապատասխան մարմինների հետ»:

• Բեռլինի հռչակագրում որակի ապահովմանը կենտրոնական տեղ է հատկացված /2003թ./. «Բարձրագույն կրթության որակը իրավամբ դարձել է Եվրոպական Բարձրագույն Կրթության Տարածքի հիմնադրման գործընթացի սիրտը: Նախարարները պարտավորվում են աջակցել որակի ապահովման հետագա զարգացմանը՝ ինստիտուցիոնալ, ազգային և եվրոպական մակարդակներում: Նրանք ընդգծում են որակի ապահովման փոխադարձաբար ընդունելի չափանիշների, ընթացակարգերի և մեթոդների մշակման անհրաժեշտությունը: Նրանք նաև շեշտում են, որ համաձայն ինստիտուցիոնալ ինքնավարության սկզբունքների՝ բարձրագույն կրթության որակի ապահովման հիմնական պատասխանատվությունն ընկնում է բուհի վրա, ինչը հիմք է ստեղծում որակի ազգային հենքի շրջանակներում բուհի ակադեմիական համակարգի իրական հաշվետու լինելուն: Այդ նպատակով նրանք պայմանավորվում են, որ մինչ 2005թ. որակի ապահովման ազգային համակարգերը պետք է ներառեն.

• ներգրավված մարմինների և հաստատությունների պատաս- խանատվության (իրավասության) շրջանակը,

• ծրագրերի և հաստատությունների գնահատումը, ներառյալ ներքին գնահատումը, արտաքին ստուգումը, ուսանողների մասնակցությունը և արդյունքների հրապարակումը,

• հավատարմագրման, հավաստագրման համակարգ կամ դրան համադրելի (համարժեք) ընթացակարգեր,

• միջազգային մասնակցություն, համագործակցություն և ցանցերի ձևավորում:

• Բերգենի հռչակագիրն /2005թ./ ամփոփում է նախորդող գործողությունների արդյունքները և նոր ուղենիշներ սահմանում որակի ապահովման և եվրոպական համագործակցության համար. «Գրեթե բոլոր երկրները հիմք են նախապատրաստել Բեռլինի հռչակագրում շարադրված չափանիշների վրա հիմնված որակի ապահովման համակարգերի համար՝ համագործակցության ու ցանցային ընդգրկման բարձր աստիճանով: Այնուամենայնիվ, դեռևս առաջընթացի անհրաժեշտություն կա, մասնավորապես ուսանողների մասնակցության և միջազգային համագործակցության առնչությամբ: Բացի

դրանից, մենք հորդորում ենք բարձրագույն ուսումնական հաստատություններին շարունակել իրենց ջանքերը համապատասխան գործողությունների որակը բարելավելու ուղղությամբ՝ ներքին մեխանիզմների համա- կարգված ներդրման և համապատասխանեցման որակի արտաքին հավաստման համակարգերի հետ»: Նկատի ունենալով որակի ապահովման ներկայացվող պահանջները և չափանիշները և հետագա շարունակական հանդիպումները (Լոնդոնում՝ 2007թ., Լյուվենում՝ 2009թ. և Բուխարեստում՝ 2012թ.)՝ անհրաժեշտություն էր առաջանում հիմնել Որակի ապահովման ազգային համակարգ: Անհրաժեշտ էր համապատասխանեցնել Հայաստանի կրթության որակի ապահովման համակարգը «Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին և ուղենիշներին» (ՈԱԵՉՈՒ): Մասնագիտական կրթության որակի ապահովման նոր համակարգի ստեղծմամբ ակնկալվում էին հետևյալ հիմնական արդյունքները.

• մասնագիտական կրթության որակի բարձրացում,

• Հայաստանի մասնագիտական կրթության որակավորումների միջազգային ճանաչման դյուրացում,

• մասնագիտական հաստատությունների հասարակական պա- տասխանատվության բարձրացում,

• ինտեգրում միջազգային կրթական ցանցերին,

• օտարերկրյա ուսանողների հոսքի ավելացում,

• միջազգային կրթական շուկայում Հայաստանի կրթական որա- կավորումների որակի վստահության ամրապնդում,

• մասնագիտական կրթության համակարգի ժողովրդավարացման խորացում: Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական ուսում - նական հաստատություններում իրականացվող գործընթացների համա - կարգման, կրթության որակի բարելավմանն ուղղված քայլերի խթանման և որակի արտաքին հավաստման համակարգի ձևավորման ու գործարկման նպատակով 2008 թվականի նոյեմբեր 27-ին ՀՀ Կառավարության N1486 որոշմամբ, ստեղծվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ): ՈԱԱԿ- ի առաքելությունն է.

• բավարարել շահակիցների պահանջները պարտադիր ինստիտուցիոնալ փորձաքննության և կամավորության սկզբունքով իրականացվող ծրագրային հավատարմագրման միջոցով,

• համաձայնեցնել որակի ապահովման չափանիշները և չափորոշիչները ընդունված միջազգային չափանիշների և չափորոշիչների հետ,

• երաշխավորել միջազգային ճանաչելիությունը, ինչը կնպաստի Եվրոպայում ՀՀ մասնագիտական կրթության ամուր դիրքեր հաստատելուն,

• արժևորել շահակիցների հետ սերտ համագործակցությունը որակի ապահովման համակարգի զարգացման գործում:

• ՈԱԱԿ-ի ռազմավարական խնդիրները հետևյալն են.

• հավաստել ՄՈՒՀ-երի գործունեության և նրանց կողմից շնորհվող որակավորումների համապատասխանությունը մասնագիտական կրթության ընդունված չափորոշիչներին,

• աջակցել մասնագիտական կրթության ծառայությունների որակի շարունակական բարելավմանը՝ համագործակցելով մասնագիտական կրթության շահակիցների հետ,

• խթանել մասնագիտական ուսումնական հաստատություն- ների (ՄՈՒՀ-երի) պատասխանատվությունը որակի ապա- հովման գործընթացի համար, երաշխավորել ՄՈՒՀ-երի որակի վերաբերյալ թափանցիկ և ճշգրիտ տեղեկատվության հանրային հասանելիությունը,

• կիրառել ազգային և միջազգային լավագույն փորձը ՄՈՒՀ-երի կրթական ծառայությունների գահատման ընթացքում:

1.2 Որակի սահմանումը

ՈԱԱԿ-ը, որպես հայաստանյան մոտեցում որդեգրել է որակի հետևյալ սահմանումը, «Որակը՝ որպես համարժեքություն հայտարարված նպատակին»: Պետք է որոշվի, թե որքանով է կրթական ծառայությունը կամ արդյունքը համապատասխանում սահմանված նպատակներին: Նման սահ- մանումը թույլ է տալիս հաստատություններին իրենց որդեգրած առաքելության մեջ դնել նպատակներ, որոնց հասնելու աստիճանով է գնահատվելու և ներկայացվելու որակը: ՈԱԱԿ-ը առաջին հերթին հատուկ ուշադրություն է դարձնում նպատակների համարժեքությանը հասարակության պահանջներին և ՀՀ կառավարության կողմից հաստատված չափորոշիչներին ու առաջնա

հերթություններին: Մասնագիտական կրթության որակի ապահովումը մի գործընթաց է, որը նպատակաուղղված է որակի պահպանմանը ու բարձրացմանը. այն է՝ դասավանդում և ուսումնառություն, հետազոտություններ, ծառայությունների

մատուցում հասարակությանը, վերլուծություն, պատշաճության մակարդակ, կադրերի հավաքագրում, նշանակման ընթացակարգեր և տարբեր մեխանիզմներ ու համակարգեր: Բարձրագույն կրթության որակի ապահովման նպատակն է երաշխավորել մասնագիտական կրթության չափորոշիչների և որակի բարելավումը՝ մասնագիտական կրթությունը ուսանողների, գործատուների և ամբողջ հասարակության կարիքներին համապատասխանեցնելու համար: Որակի սահմանման տարբեր մոտեցումներն են

. • Որակը որպես գերազանցություն. որակի այս ավանդական հասկացությունը նույնացվում է յուրահատուկ ծառայության կամ արտադրանքի հետ և այդ ծառայության կամ արտադրանքի համար կարգավիճակ է շնորհվում թե՛ ծառայություն տրամադրողին, թե՛ այդ ծառայությունից օգտվողին: Այս պարագայում, որակի չափումը գերազանցությունն է:

• Որակը որպես կատարելություն (զրո դեֆիցիտ). որակի այս հասկացությունը դիտարկվում է որպես համապատասխանություն որևէ չափորոշիչի կամ պահանջի հետ: Այս մոտեցման արմատները արդյունաբերության որակի վերահսկման գաղափարից են բխում: Այն չափման հիմք է, չեզոք գաղափար, որը կիրառվում է արտադրանքի կամ ծառայության պահանջված հատկանիշները նկարագրելու համար:

• Որակը որպես համապատասխանություն նպատակին. որակի այս սահմանումն ընդունված է վերլուծաբանների և բարձրագույն կրթության քաղաքականություն մշակողների մեծամասնության կողմից: Այս մոտեցումն առաջարկում է, որ որակը ոչ մի իմաստ չունի, եթե այն միտված չէ ծառայությունների կամ արտադրանքի նախանշված նպատակներին հասնելուն: Այս պարագայում, որակը գնահատվում է՝ հիմք ընդունելով, թե որքանով է տվյալ ծառայությունը կամ արտադրանքը համապատասխանում նախանշված նպատակներին:

• Որակը որպես վճարված գումարին համապատասխան ծառայություն. որակի այս սահմանումը դիտվում է հաստատության նպատակներին հասնելու արդյունավետության տեսանկյունից: Այս սահմանումը. «որակը որպես համապատասխանություն նպատակին» սահմանման տարբերակներից է, և այն շեշտադրում է ներդրումների արդյունավետ օգտագործումը:

• Որակը որպես փոխակերպում. որակի այս սահմանումը բխում է «որակական փոխակերպում» հասկացությունից և ենթադրում է արմատական փոփոխություն:

Փոխակերպումը չի սահմանափակվում ակնհայտ կամ ֆիզիկական փոփոխություններով, ավելին, այն ներառում է ճանաչողական/իմացական փոխակերպումներ: Կրթության տեսանկյունից փոխակերպումը վերաբերում է ուսանողների կարողությունների ընդլայնմանը և հզորացմանը կամ նոր գիտելիքի զարգացմանը:

1.3Որակի ապահովման համակարգ

Որակի ապահովման համակարգի ձևավորումը, սովորաբար, սկսվում է տարբեր շահակիցների ակնկալիքների վերհանումից, որոնք հետագայում կիրառվում են հաստատության գործունեությունը գնահատելիս: Այդ գնահատումը լինում է երկու տեսակ՝ ինքնավերլուծություն և արտաքին գնահատում: Գնահատմանը, սովորաբար, հաջորդում է բարելավմանը միտված նոր գործողությունների պլանավորումը, ինչպես նաև դրանց արդյունավետության գնահատումը: Որակի ապահովման համակարգը կամ շրջանակը՝

- սահմանում է, թե ինչպես են կառավարվում որակի ապահովմանն ուղված միջոցառումները,
- բացատրում է, թե ինչ եղանակով են հավաքագրվում փաստերը և տվյալները,
- ներկայացնում է, թե ինչպես է գնահատվում ծառայությունների որակը: Վերոնշյալը իրականացվում է կարիքների վերհանման և որակի բարելավ- ման ենթակա ոլորտները սահմանելու նպատակով:

1.4Բարձրագույն կրթության որակի ապահովման չափորոշիչները և ուղենիշները

Բարձրագույն կրթության որակի հավաստման ներքին և արտաքին համակարգերի սկզբունքները և ընթացակարգերը մշակվել են Եվրոպայի Բարձրագույն Կրթության Տարածքում /ԵԲԿՏ/ գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների և որակի ապահովման գործա- կալությունների կիրառման համար՝ ընդգրկելով որակին և չափորոշիչներին վերաբերող հիմնական դրույթները: Այս չափորոշիչների և ուղեցույցների նպատակն է աջակցել բարձրագույն ուսումնական հաստատություններին որակի համակարգերի զարգացման գործում և գործակալություններին՝ իրականացնելու որակի արտաքին գնահատում, ինչպես նաև ձևավորել չափանիշների ընդհանուր շրջանակ, որը կարող է կիրառվել և՛ հաստատությունների, և՛ գործակալությունների կողմից: Սա չի նշանակում, որ այս չափորոշիչները և ուղեցույցները գործողություններ են թելադրելու և մնալու են անփոփոխ: ԵԲԿՏ-ի որոշ երկրներում կրթության նախարարությունը կամ դրան

համարժեք կազմակերպությունը պատասխանատու է չափորոշիչներում և ուղեցույցներում ընդգրկված որոշ բաժինների համար: Այն երկրում, որտեղ այսպես է, նախարարությունը կամ կազմակերպությունը պետք է ապահովի որակի հավաստման պատշաճ մեխանիզմներ:

1.5 Որակի ապահովման Եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ /ՈԱԵՉՈՒ/-ի հիմնական սկզբունքները

Որակի ապահովման չափորոշիչները և ուղենիշները հիմնված են ԵԲԿՏ բարձրագույն կրթության որակի ներքին և արտաքին ապահովման մի շարք հիմնական սկզբունքների վրա: Դրանք են՝

- բարձրագույն կրթություն տրամադրողները պատասխանատու են իրենց մատուցած նյութի որակի և դրա ապահովման համար,
- բարձրագույն կրթության որակի և չափորոշիչների նկատմամբ հասարակության հետաքրքրության պաշտպանությունը,
- ԵԲԿՏ-ում ուսանողների և բարձրագույն կրթության այլ շահակիցների համար ուսումնական ծրագրերի որակի բարձրացումը,
- արդյունավետ կազմակերպական կառուցվածքների ներդրումը, որոնց շրջանակներում հնարավոր կլինի մատուցել և աջակցել ուսումնական ծրագրերին,
- որակի ապահովման գործընթացում արտաքին փորձագիտության կիրառման և թափանցիկության կարևորությունը,
- բարձրագույն կրթական հաստատություններում որակի միջավայ- րի խրախուսումը,
- այնպիսի գործընթացների զարգացումը, որոնց միջոցով բարձ- րագույն կրթական հաստատությունները կապահովեն հաշվետվողականությունը, այդ թվում պետական և մասնավոր ներ- դրումների համար,
- հաստատությունները պետք է ցուցադրեն որակ, ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս,
- պետք է կիրառվեն բազմազանությանը և նորարարությանը չխոչընդոտող գործընթացներ: Չափորոշիչների և ուղենիշների նպատակներն են՝
- ԵԲԿՏ-ում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողներին մատչելի կրթության ապահովման բարելավումը,

• բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի կառա- վարման և բարձրացման հարցում դրանց աջակցելը, հետևաբար ինստիտուցիոնալ ինքնավարության հաստատման գործում օգնելը,

• որակի ապահովման գործակալությունների աշխատանքի համար հիմքերի ստեղծելը,

• որակի արտաքին ապահովումն ավելի թափանցիկ և շահակիցների/ ընդգրկվածների համար ավելի դյուրին դարձնելը: Չափորոշիչների և ուղենիշների խնդիրներն են՝

• խրախուսել մտավոր և կրթական նվաճումները խթանող բարձ- րագույն կրթական հաստատությունների զարգացումը,

• բարձրագույն ուսումնական հաստատությունների և այլ համապատասխան գործակալությունների որակի ապահովման սեփական միջավայրի զարգացման համար աջակցման և ուղղորդման ռեսուրսների տրամադրումը,

• բարձրագույն կրթական գործընթացների և արդյունքների համապատասխան հաստատությունների, ուսանողների, գործատուների և այլ մասնակիցների սպասումների խրախուսումը,

• ԵԲԿՏ-ում որակի ապահովման և բարձրագույն կրթության մատուցման համար ընդհանուր շրջանակի ներդրումը:

Որակի ապահովման եվրոպական չափորոշիչները և ուղենիշները՝ (ՈԱԵՉՈՒ) բաղկացած են երեք մասից.

Մաս 1. Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համար:

Մաս 2. Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման համար:

Մաս 3. Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ որակի արտաքին ապահովման գործակալությունների համար: Որակի հավաստման հիմնական ուղեցույցը «Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ» փաստաթուղթն է, որով առաջնորդվում են Բոլոնիայի գործընթացի անդամ երկրները: Վերջին տարիներին, գնահատելով կուտակված փորձը՝ ENQA, ESU, EUA և EURASHE կազմակերպություններն առաջարկել են լրամշակել հիմնական փաստաթուղթը: Առաջարկները քննարկման փուլում են, որոնց

հիմնական առանցքն է՝ բարձրացնել «Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշների» փաստաթղթի հստակությունը, կիրառելիությունը և օգտակարությունը: Նշենք առաջարկներից մի քանիսը.

1. «Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշները» սահմանում է որակի հավաստման սկզբունքները, այլ ոչ մանրամասն քարտեզագրում նպատակին հասնելու ուղիները և գործիքակազմը:

2. «Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշները» և որակի ապահովման այլ գործիքակազմ ներառել Բոլոնիայի համատեքստում, միահյուսելով Բոլոնիայի գործողությունների վերջնարդյունքներին:

1.6 Որակի ներքին՝ բուհական ապահովման չափորոշիչները և ուղենիշները

Հիմնական սկզբունքը, որ բնորոշում է նոր ձևավորվող համակարգը, անցումն է կրթական գործընթացի «մուտքերի» վերահսկումից «ելքերի» մշտադիտարկմանը և վերահսկմանը: Գերիշխող է դառնում կրթության

պլանավորման այնպիսի մեթոդաբանություն, որի դեպքում կրթական վերջնարդյունքները հանդիսանում են բարձրագույն կրթության կարևորագույն կառուցվածքային տարրերից մեկը: Հետևաբար բուհերի կրթական գործունեության արդյունավետության գնահատման մեջ գլխավորը ոչ թե ուսումնական գործընթացի պլանավորումը և իրականացումն է (ուսումնական պլանների բովանդակությունը, ուսուցման ժամերը և այլն), այլ ուսումնառության վերջնարդյունքները՝ ուսանողների ձեռք բերած գիտելիքը, կարողությունները և հմտությունները, այդ թվում՝ ինքնուրույն ուսուցման և ինքնակրթության միջոցով ձեռք բերվածը: Որակի գնահատման գործընթացի ծանրության կենտրոնը ավելի ու ավելի է տեղափոխվում ուսումնական գործընթացի վերլուծությունից (կրթական ծրագրեր, ուսանողների ակադեմիական առաջադիմություն և այլն) դեպի ծրագրերի ելքում ձևավորված կարողությունների գնահատումը: Գնահատման համակարգը ավելի ու ավելի է կողմնորոշվում դեպի մասնագիտական և անհատական պատրաստվածության ստուգումը, և, առաջին հերթին, դեպի շրջանավարտների աշխատանքի տեղավորման հնարավորությունները և ծառայունակությունը, որը և պետք է լինի կրթության արդյունքի գնահատման հիմնական չափանիշը: Այդ պայմաններում որակի ապահովման մեխանիզմները դառնում են կրթական համակարգի «ըստ արդյունքների» կառավարման կենտրոնական բաղկացուցիչը: Վերջապես, բարձրագույն կրթության որակի շեշտադրումը հետապնդում է նաև դիպլոմների և

որակավորումների համեմատելիության և ճանաչման ձեռքբերման, եվրոպական կրթության առավելությունների ճանաչման, վստահելիության ու մրցունակության բարձրացման նպատակներ: Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչները և ուղենիշներն են՝

1. **Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ.** հաստատություններն իրենց ծրագրերի, կրթական աստիճանների որակի և չափորոշիչների ապահովման համար պետք է մշակեն քաղաքականություն և դրան առնչվող ընթացակարգեր: Դրանք պետք է հետևողականորեն նպաստեն իրենց աշխատանքում որակի կարևորությունը և ապահովումը գնահատող միջավայրի զարգացմանը: Այն ձեռք բերելու համար հաստատությունները պետք է զարգացնեն և իրագործեն որակի շարունակական ամրապնդման ռազմավարություն: Հաստատությունները պետք է նաև կարևորեն ուսանողների և այլ շահակիցների դերը:

2. **Ծրագրերի և կրթական աստիճանների հաստատում**, մշտադիտարկում և պարբերական վերանայում. հաստատությունները պետք է ունենան ծրագրերի և կրթական աստիճանների հաստատման, պարբերական վերանայման և մշտադիտարկման հաստատված մեխանիզմներ:

3. **Ուսանողների ուսումնառության գնահատում**. ուսանողների ուսումնառությունը պետք է գնահատվի ընդունված և հանրությանը հասանելի չափանիշներով, սահմանված կարգով և ընթացակարգերով, որոնք համահավասար են կիրառվում:

4. **Պրոֆեսորադասախոսական կազմի որակի ապահովում**. հաստատությունները պետք է ունենան որակյալ և բանիմաց անձնակազմով համալրվելու մեխանիզմներ: Դասավանդող անձնակազմը պետք է մասնակցի արտաքին վերանայմանը, և նրանց կատարած աշխատանքի որակի մասին տեղեկատվությունը պետք է արտացոլվի վերջնական զեկույցում:

5.**Ուսումնառության ռեսուրսներ և աջակցում ուսանողներին**. հաստատությունները պետք է հավաստեն, որ ուսանողներն ապահովված են առարկայական ծրագրերով նախատեսված ռեսուրսներով:

6. Տեղեկատվական համակարգեր. հաստատությունները պետք է հավաստեն, որ նրանք իրենց ուսումնական ծրագրերի և այլ գործառույթների կառավարման արդյունավետության համար հավաքագրում, վերլուծում և օգտագործում են համապատասխան տեղեկատվություն:

7. **Հրապարակայնություն**. հաստատությունները պետք է իրենց առաջարկած ծրագրերի և կրթական աստիճանների մասին մշտապես հրապարակեն ինչպես քանակական, այնպես էլ որակական նորացված, անաչառ տեղեկատվություն:

ՈԱԱԿ-ը առանձնացրել է որակը գնահատելու և ճանաչելու յոթ տիրույթ: Դրանք են.

1. **Ինստիտուցիոնալ կարողություն**. ինստիտուցիոնալ կարողությունը նկարագրում է ուսանողներին կայուն ու բարձրորակ ծառայություններ մատուցելու բաղադրիչները:

2. **Կրթական ծրագրեր**. կրթական ծրագրերի ճկունությունը, համապատասխանությունը արդի շուկայական պահանջներին բարենպաստ նախապայմաններ է ստեղծում հարափոփոխ միջավայրում գործելու, ունակ մասնագետներ պատրաստելու համար: Դրանով իսկ կրթական ծրագրերի նախագծման, մշտադիտարկման, հաստատման և գնահատման գործում ձեռնարկված հստակ քայլերը կարևոր նշանակություն ունեն կրթական որակյալ պայմաններ ձևավորելու համար:

3. **Գիտելիքի կառավարում**. գիտելիքի կառավարումն ուղղված է գիտելիք ձևավորելու գործընթացի արդյունավետությանն ու հուսալիությանը, ինչպես նաև զարգացմանը և կիրառելիության ապահովմանը: Այն ընդգրկում է նաև հաստատության կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքները և ուսումնական ծրագրերի հետ դրանց կապակցումը:

4. **Ուսանողակենտրոն մոտեցում**. կրթության զանգվածային բնույթը ենթադրում է, որ շրջանավարտները պետք է կարողանան գործունեություն ծավալել հարափոփոխ միջավայրում և ունենան փոխանցելի հմտություններ: Այսպիսի ուղղվածության արդյունքներն առավել արդյունավետ են լինում, երբ ուսանողներն ու դասախոսներն աշխատում են ներդաշնակորեն՝ համագործակցային մթնոլորտում, ուսանողներն ուսումնառության ընթացքում օժտված են լինում ավելի մեծ ինքնուրույնությամբ ու ճկունությամբ: Արդյունքում, ուսանողների մոտ ձևավորվում են գիտելիք ձեռք բերելու հմտություններ, ինչն էլ օգնում է նրանց սովորելու ողջ կյանքի ընթացքում: Այդօրինակ մոտեցման պարագայում փոխվում է նաև դասախոսի դերակատարությունը. նրա գլխավոր նպատակն է դառնում ուսանողների կրթական գործողություններն ուղղորդելու, գիտելիքի յուրացման և կոմպետենցիաների ձեռքբերման գործընթացը կառավարելու գործառույթի իրականացումը:

5.**Տեղեկատվության կառավարում**. տեղեկատվության ճիշտ կառավարումը վերաբերում է տարբեր մակարդակներում (ներբուհական, ազգային և միջազգային) կատարվող փոփոխությունների վերաբերյալ հիմնավորված և նորացվող տեղեկությունների հավաքագրմանը, վերլուծությանն ու տարածմանը: Հարկ է նշել, որ գործընթացի արդյունավետության համար կարևոր նշանակություն ունի թափանցիկության և հրապարակայնության ապահովումը:

6. **Ֆինանսավորում.** ֆինանսավորման մեխանիզմները կարևոր նշանակություն ունեն որակյալ կրթության ապահովման գործում՝ անհատների ու հասարակության համար մատչելի կրթություն ապահովելու համար համապատասխան ռեսուրսներ ձևավորելով, ինչպես նաև հեռանկարներ ստեղծելով ինստիտուցիոնալ զարգացման համար:

7. **Որակի մշակույթ**. որակը էապես կախված է կրթական հաստատություններում ձևավորված մշակույթից, որը ենթադրում է վերլուծական գործունեություն, թափանցիկություն և շարունակական բարելավում: Ուստի Որակի կենտրոնը կարևորում է որակի ներքին ապահովման կայուն մեխանիզմներ ապահովող որակի մշակույթի դերը, ինչպես նաև ուսումնառության որակը: Այս յոթ տիրույթներից յուրաքանչյուրի համար Որակի կենտրոնը սահմանել է որոշակի չափանիշներ և չափորոշիչներ: Սահմանված չափանիշները կրթական հաստատությունների կողմից պետք է ընկալվեն որպես որակի ապահովման համար անհրաժեշտ ուղենիշներ: Յոթ տիրույթներից յուրաքանչյուրի համար դրանք ձևակերպված են որպես բազմաձևության և նորարարության որոշակի ազատություն ապահովող տարածական սահմանումներ՝ ելնելով տարբեր հաստատությունների բնույթի, որդեգրած կրթական հայեցակարգերի և նպատակների միջև առկա էական տարբերություններից: Այդ ամենով հանդերձ, չափանիշները սահմանված են բավարար հստակությամբ՝ հավաստիանալու համար, որ ընդունելի որակի կարևոր ասպեկտները առկա են ձևակերպումներում: Հավատարմագրված կարգավիճակ ձեռք բերելու համար հաստատությունները պետք է գնահատվեն սահմանված բոլոր չափանիշներով: ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովումը Հայաստանի մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգի հիմնական տարրերից մեկն է: Որակի ներքին ապահովման գործընթացներն ուսումնական հաստատության գործունեության մաս պետք է կազմեն: Որակի ներքին ապահովման համակարգի հիմնական առաքելությունը բարձրագույն ուսումնական

հաստությունների գործունեության շարունակական բարելավումն ապահովելն է: Շարունակական բարելավման գործընթացը կարող է իրականանալ բոլոր հնարավոր ներգրավված կողմերի ստանձնած պարտավորության շնորհիվ՝ միաժամանակ երաշխավորելով մասնակիցների կարողությունների հզորացում, որը տեղի է ունենում աշխատակազմի շարունակական զարգացման միջոցով:

Որակի շարունակական բարելավումն ընդգրկում է 3 հիմնական գործողություն՝ նպատակների և հավատարմագրման չափանիշների սահմանում, գործունեության գնահատում՝ ըստ այդմ չափանիշների, և հետագա գործունեության բարելավում: Դա ձևավորում է որակի կառավարման շարժիչ սկզբունքը՝ պլանավորում, իրականացում, ստուգում և բարելավում՝ գործընթաց, որի միջոցով ՄՈՒՀ-ն իր և իր շահակիցների համար հաստատում է, որ հնարավորինս բարձր արդյունքների է հասել իր գործունեության բոլոր ոլորտներում: Հաշվետվողականության համատեքստում որակի ապահովումը գործածվում է որպես մշտադիտարկումներ կատարելու մեխանիզմ: Ուսանողները, շրջանավարտները, գործատուները և հասարակությունը բարձր որակ են ակնկալում ուսումնական հաստատություններից: Որակի ապահովումը կարևորագույն գործիք է բուհի կրթական գործունեության համար, որը երաշխավորում է ոչ միայն հասարակության պահանջների և կարիքների բավարարումը, այլև բուհի անկախությունը և ինքնավարությունը: Բուհի հաշվետվողականությունը և թափանցիկությունը երաշխավորելու համար անհրաժեշտ է որակի ներքին ապահովման ռազմավարության և ընթացակարգերի արտաքին գնահատում: Հավատարմագրման չափանիշներով սահմանված մակարդակին հասնելու համար բուհի գործունեության բոլոր ոլորտներում և գործառույթներում պահանջվում է տեղեկատվական հոսքերի պարզեցում և ընթացակարգերի թափանցիկություն: Բուհի առաքելությունը և կանոնակարգող համապատասխան բոլոր փաստաթղթերը պետք է լինեն հրապարակված և հասանելի դասախոսների, ուսանողների ու բոլոր շահակիցների համար: Որակի ներքին ապահովման համակարգերի կազմակերպման և կառավարման պահանջներն են.

1. Բուհի որակի ապահովման ընթացակարգերը պետք է կազմվեն հետամուտ լինելով մասնագիտական կրթության որակի բարելավմանը և պահպանմանը: Այդ ընթացակարգերը պետք է համահունչ լինեն ՈԱԱԿ-ի որակի չափանիշներին, քաղաքականությանը և ընթացակարգերին: Իր հերթին, ՈԱԱԿ-ը պետք է տրամադրի

որակի ապահովման քաղաքականության շրջանակ, որը կուղղորդի բուհերի որակի ներքին համակարգի ստեղծումն ու գործարկումը:

2. Որակի ներքին ապահովման քաղաքականությունը պետք է արտացոլի բուհերի առաքելությունն ու որդեգրած արժեքները և սերտորեն կապված լինի թե՛ կառավարման ռազմավարական պլանի և թե՛ իրականացվող գործունեության հետ: Որակի ներքին ապահովման քաղաքականությունը պետք է սահմանի որակի պարզ և չափելի խնդիրներ կազմակերպության տարբեր գործառույթների և մակարդակների համար: Գործընթացները պետք է առաքելության, արժեքների և տարբեր ծրագրերի, ձերքբերումների վերանայման, վերլուծության և զարգացման հնարավորություն տան:

3. Որակի ապահովման քաղաքականությունը պետք է տարածվի բուհի գործառույթների և գործողությունների այն բոլոր ասպեկտների վրա, որոնք ազդում են կրթական ծրագրերի չափորոշիչների պահպանման և որակի ապահովման վրա, ինչպիսիք են, օրինակ, դասավանդումը, հետազոտական աշխատանքները, ուսումնառությանն աջակցելու ծառայությունները, կառույցները, կացարանները, կահավորումն ու սարքավորումները, կառավարումը, համայնքային ծառայությունները և համագործակցությունը արտադրության հետ:

4. Որակի ապահովման քաղաքականությունը պետք է կենտրոնանա հայտարարված առաքելությունից բխող նպատակների կատարման ընթացքի որակի վրա: Կատարողական ցուցիչների վերանայումն՝ ըստ թիրախների այսպիսի քաղաքականության բաղկացուցիչ մասն է: Ուսանողների կողմից ակնկալվող կրթական արդյունքներին հասնելու աստիճանը պետք է քննարկման հիմնական առարկան լինի: Կրթական ծրագրի հետագա բարելավումը նույնպես պետք է քաղաքականության հիմնական խնդիրը լինի:

5. Որակի ապահովման քաղաքականություն մշակելու և ինստիտուցիոնալ որակը պահպանելու ու բարելավելու պատասխանատվությունը, որպես կանոն, թողնվում է բուհի կառավարման մարմնին: Եթե կառավարման մարմինը որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի մշակման ու իրականացման պատասխանատվությունը վերահասցեագրում է որևէ այլ մարմնի կամ պաշտոնատար անձի, ապա դա անհրաժեշտ է հստակ սահմանել: Այդ մարմինը կամ անձը որակին առնչվող խնդիրները պետք է անմիջականորեն զեկուցի կառավարման մարմնին, ուստի պետք է պատշաճ տեղ զբաղեցնի հաստատության

կազմակերպական կառուցվածքում, որպեսզի իրեն վերապահված գործառույթները կատարելու անհրաժեշտ լիազորություններ ունենա:

6. Որակի ապահովման քաղաքականությունը պետք է ապահովի արտաքին փորձագետների ներգրավումը որակի ապահովման քաղաքականության և գործընթացների վերանայման գործում:

7. Արտաքին փորձագետների ընտրության և մասնակցության հարցում պետք է ապահովվի նաև էթիկական նորմերի պահպանումը: Փորձագետները պետք է նախապես հայտնեն անձնական, մասնագիտական, ակադեմիական կամ գործնական շահերի առկայության մասին, որոնք կարող են հակասել իրենց փորձագիտական պարտավորություններին: Փորձագետների անկախությունն ու գործընթացի թափանցիկությունը որոշիչ գործոններ են հաջողության հասնելու համար: Որակի ապահովման քաղաքականության հաջող իրականացման համար բուհը պետք է հատկացնի անհրաժեշտ ռեսուրսներ:

8. Բուհը պետք է ունենա որակի ապահովման գործընթացների ամբողջական նկարագրություն պարունակող որակի ապահովման ձեռնարկ : Ձեռնարկը պետք է ներառի կազմակերպական գծապատկերը, որը ցուցադրում է որակի ապահովման պատասխանատվությունների բաշխումը և հաշվետվությունների ներկայացումը՝ ըստ ենթակառույցների: Որակի ապահովման գործընթացները պետք է արտացոլեն տվյալ բուհի առանձնահատկությունները, ինչպես նաև հանրային կարիքների և աշխատաշուկայի հետ կապված յուրահատուկ խնդիրներն ու նպատակները: Որակի չափանիշները պետք է համահունչ լինեն բուհի խնդիրներին՝ ամբողջ կազմակերպության, առանձին ֆակուլտետի և մասնագիտության կրթական ծրագրի/ծրագրերի մակարդակում: Ընթացակարգերը պետք է ընդգրկեն, սակայն չսահմանափակվեն սույն փաստաթղթում նկարագրված չափանիշներով: 9. Որակի ապահովման ընթացակարգերը պետք է վերստուգելի տվյալների տեսքով տրամադրեն կատարողականի վկայություններ առ այն, որ որակի ապահովման օբյեկտները պատշաճ կերպով դիտարկվել են:Հետևաբար, որակի ապահովման օբյեկտները պետք է հստակ սահմանվեն, ինստիտուցիոնալ կամ ծրագրային խնդիրներին համադրելի, ինչպես նաև պարզ և չափելի լինեն: Փաստաթղթերում կատարողական տվյալների պարբերաբար արձանագրումը կարևոր նշանակություն ունի որակի արդյունավետ պահպանման և բարելավման համար:

10. Ընթացակարգերը պետք է ապահովեն որոշումների պաշտոնական, պարբերաբար և հետևողական կայացումը և իրականացման ընթացքը: Այս պահանջը բխում է որակի վերանայման արդյունքներով հայտնաբերված տվյալներին արդյունավետ կերպով արձագանքելու երաշխիքներ ձևավորելու անհրաժեշտությունից: Հիմնական պահանջներից մեկը որակի պահպանման և բարելավման գործողությունների պարբերաբար փաստաթղթավորումն է:

11. Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի որակի ապահովման այնպիսի ասպեկտների վրա, որոնք հեշտ չեն ենթարկվում քանակապես արտահայտելի մշտադիտարկման: Բուհը պետք է որդեգրի համապատասխան քաղաքականություն և ռազմավարություն՝ երաշխավորելու համար, որ այդ ասպեկտները որակի ապահովման ընթացակարգերով չեն շրջանցվել:

1 Որակի ապահովման ընթացակարգերը յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրի/ծառայության դեպքում պետք է կենտրոնանան.

• ծրագրի/ծառայության խնդիրների վրա,

• ծրագրի/ծառայության՝ իր առջև դրված խնդիրներին համապատասխանությունը հաստատող փաստերի վրա,

• թերությունները վերացնելու և բարելավումներ կատարելու գործընթացների արդյունավետության վրա: Որակի ներքին ապահովման գործընթացներում կարևոր դերակատարություն ունեն բուհերի որակի ներքին ապահովման ստորաբաժանումները: Բարձրագույն կրթության որակի ապահովման ասպարեզում հիմնական միտումը հավատարմագրման ազգային համակարգերի միջոցով կրթական գործընթացի և նրա արդյունքների որակի արտաքին վերահսկողությունից անցումն է դեպի որակի կառավարման բուհերի ներքին ինքնագնահատումը (ինքնավերլուծությունը)՝ զուգակցելով այն արտաքին գնահատման համակարգի հետ:

1.7 Որակի արտաքին ապահովում Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային համակարգերի ձևավորման գործընթացում մեծ տարածում է գտել որակի արտաքին գնահատումը, ընդ որում, ծրագրերի կամ բուհերի արտաքին գնահատման ժամանակ հիմնական շեշտը դրվում է որակի չափանիշներին համապատասխանության վրա: Հստակ սահմանազատվում են նաև արտաքին գնահատման նպատակները, այդ թվում՝ որակի համար բուհերի հաշվետու լինելը, կրթության որակի բարձրացումը, գնահատման թափանցիկության ապահովումը,

գնահատման չափանիշների ազգային և միջազգային համադրելիության հասնելը և կրթական հաստատությունների համեմատական դասակարգումը: Որակի արտաքին ապահովման գործընթացներն ունեն երեք հիմնական նպատակ.

• Հաշվետվողականություն և թափանցիկություն: Որակի ապահովման գործընթացները երաշխավորում են, որ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և պետական կրթական չափո- րոշիչների ապահովման դեպքում հասարակության շահերը պաշտ- պանված կլինեն, ինչպես նաև հրապարակային են դարձնում առանձին ՄՈՒՀ-երի կրթական ծառայությունների որակը երկրի ներսում և նրա սահմաններից դուրս:

• Վերահսկում: Հաստատությունը ոչ միայն վերահսկում է ռեսուրսների ծախսը, այլև ցույց է տալիս, որ առկա ռեսուրսները արդյունավետ օգտագործելով՝ հասնում է հնարավորինս բարձր որակի:

• Որակի բարելավում: Հաստատությունը քննարկումներ և վերլուծություններ է ձեռնարկում որակի ապահովման գործընթացի արդյունավետության, որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացման նպատակով: Ընդհանուր առմամբ, որակի արտաքին ապահովման նպատակն է հավաստել, որ բուհերը հետամուտ են հետևյալ հարցերի պատասխաններին՝

• արդյո՞ք բուհն ունի որոշակի մշակույթ ձևավորող ընթացակարգեր, որոնք գործում են հաստատության բոլոր օղակներում և կրթական բոլոր ծրագրերի իրականացման ընթացքում,

• արդյո՞ք բուհը պարբերաբար մշտադիտարկում է որակական նպատակներին հասնելու իր առաջընթացը, մասնավորապես, կրթական ծառայությունների որակի պահպանումն ու հետագա բարելավումը,

• արդյո՞ք որակի ապահովման ընթացակարգերի տվյալներն օգտագործվում են կրթական և վերապատրաստման ծառա- յությունների որակը բարձրացնելու և սովորողների կարիքներին համապատասխանեցնելու նպատակով,

• արդյո՞ք բուհը մշտադիտարկում է սովորողներին տրամադրվող ծառայությունների արդյունավետությունը,

• արդյո՞ք ձեռնարկվում են համապատասխան գործողություններ, որոնք կշտկեն որակի ապահովման գործընթացում հայտնաբերված բացթողումները,

• արդյո՞ք շահակիցներին տրամադրվում է հաստատության և մասնագիտությունների կրթական ծրագրերի որակի վերաբերյալ համարժեք

տեղեկատվություն: Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի որակի ապահովման ընթացակարգերի մշակման, պահպանման և իրագործման ընթացքում կարևոր է հասկանալ, որ այն չի կարող սահմանափակվել միայն հեշտ չափելի քանակական տվյալներով, քանի որ դա կարող է ուշադրությունը շեղել որակի ապահովման գործընթացի այլ կարևոր ասպեկտներից, որոնք չափվում են որակական մոտեցումների միջոցով: ՈԱԱԿ-ը բուհերի որակի ապահովման արդյունավետությունը դիտարկում է շրջափուլային եղանակով: Նման դիտարկումների արդյունքները հանրությանը հասանելի են լինում: Դրանց հրապարակումը կարևոր է՝ ձեռք բերելու հանրության վստահությունը՝ որակը վերահսկելու և կառավարելու վերաբերյալ: Այս գործընթացում ՈԱԱԿ-ը ակնկալում է բոլոր շահակիցների մասնակցությունը: Որակի արտաքին ապահովման շրջանակը Հայաստանի մասնացիտական կրթության որակի ապահովման համար ՈԱԱԿ-ը մշակել է որակի ապահովման համապարփակ շրջանակ, որը կառուցված է չորս մեխանիզմների շուրջ: Դրանք գնահատվում են ըստ սահմանված չափանիշների և չափորոշիչների, որոնց նպատակն է օժանդակել բուհերին՝ հաստատության և իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի մակարդակում ինքնագնահատում կատարելու և բարելավման կարիք ունեցող ոլորտները բացահայտելու գործում: Որակի արտաքին ապահովման գործընթացը ընթանում է երեք հիմնական փուլերով.

- որակի արտաքին ապահովման գործընթացի ենթակա կառույցի ինքնագնահատում,
- արտաքին փորձագետների այցելություն,
- երկու փուլերի արդյունքում կայացված որոշում և որոշման հրապարակում: Որակի ապահովման գործընթացներ Համաձայն ՈԱԱԿ-ի մոտեցման՝ որակը համապատասխանությունն է սահմանված նպատակներին:

Այսպես, հաստատություններն իրենց որդեգրած առաքելության շրջանակում կարող են ներառել նպատակներ, որոնց իրականացման աստիճանով է գնահատվելու որակը: Յուրաքանչյուր ուսում- նական հաստատություն պատասխանատու է իր կրթության որակի համար, այսինքն՝ ինքն է ներդնում որակի ապահովման ներբուհական համակարգ և իրականացնում որակի ներքին ապահովման գործընթացներ: Այլ կերպ ասած՝ ուսումնական հաստատությունը սահմանում է իր գործունեության շրջանակը, իրականացնում է այն և հիմնավորում է դա երրորդ

մարմնին՝ՈՒԱԱԿ-ին: ՈՒԱԱԿ-ը մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ապահովման գործընթացն իրականացնում է ինստիտուցիոնալ հավատարմագրման և ծրագրային հավատարմագրման միջոցով: ՈՒԱԱԿ-ը միակ և առաջին անկախ կառույցն է ՀՀ-ում, որն իրավասու է իրականացնել բուհերի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատար- մագրման գործընթացները, սահմանել այն հաստատություններն ու մաս- նագիտությունների կրթական ծրագրերը, որոնք բավարարում են պետական կրթական չափորոշիչների և հավատարմագրման չափանիշների պահանջները, թարմացնել հավատարմագրման չափանիշները, չափորոշիչները և ընթացակարգերը, առաջարկություններ ներկայացնել լրամշակման վերա- բերյալ: Պետական հավատարմագրումը. պետության կողմից մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեության, մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման և որակի ճանաչման գործընթաց է: Հավատարմագրումը տրվում է որոշակի ժամանակահատվածով՝ երաշխավորելով, որ ուսումնական հաստատությունը կամ կրթական ծրագիրն ունի անհրաժեշտ կարողություն տվյալ ժամանակահատվածում կրթական գործունեություն իրականացնելու համար: Մասնագիտական կրթության հավատար- մագրման հիմնական նպատակն է հավաստել բուհերին, ուսանողներին, նրանց ծնողներին, գործատուներին և շահագրգիռ հասարակությանը, որ մասնագիտական կրթության որակը ճանաչելի է պետության կողմից: Ինստիտուցիոնալ հավատարմագրում. Ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) հավատարմագրումը պետության կողմից ուսումնական հաստատության կրթական և որակի ապահովման գործընթացների, մասնագիտությունների կրթական ծրագրերի պետական կրթական չափորոշիչներին և ենթակառուցվածքային հավատարմագրման չափանիշներին համապատասխանության ճանաչումն է: Այն պարբերաբար իրականացվող պարտադիր գործընթաց է մասնագիտական ուսումնական բոլոր հաստատությունների համար: Այս գործընթացը թույլ է տալիս պարբերաբար գնահատել բուհի գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև վերահսկել՝ արդյոք այն իրականացնում է իր առաքելությունը: Նշենք, որ ինստիտուցիոնալ հավատարմագրումը նախապայման է ծրագրային հավատարմագրման համար: Ծրագրային հավատարմագրում. Մասնագիտության կրթական ծրագրի հավատարմագրումն իրականացվում է բուհի նախաձեռնությամբ կամավորության սկզբունքով, բացառությամբ պետական ուսումնական

հաստատությունների և բժշկական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունների: Ծրագրային հավատարմագրումը պետության կողմից մասնագիտության կրթական ծրագրի, մասնագետների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին և ծրագրային հավատարմագրման չափանիշներին համապատասխանության ճանաչումն է: Ծրագրային հավատարմագրման թիրախն առանձին մասնագիտության և ոչ թե ամբողջությամբ հաստատության, կրթական ծրագիրն է: Այս գործընթացը թույլ է տալիս պարբերաբար գնահատել մասնագիտության կրթական ծրագրի արդյունավետությունը, ինչպես նաև վերահսկել՝ արդյոք այն ապահովում է ուսումնառության արդյունքների ձեռքբերումն ակնկալվող ամբողջ ծավալով: Հավատարմագրման ընթացակարգ Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացներն իրականացվում են երեք հաջորդական փուլով:

Առաջին փուլ. ուսումնական հաստատության ինքնավերլուծություն: Հավատարմագրման գործընթացը ենթադրում է՝ հաստատություններն ուսումնասիրեն իրենց առաքելությունը, նպատակները, գործընթացները և ձեռքբերումները մանրամասն ինքնավերլուծության գործընթացի միջոցով:

Երկրորդ փուլ. արտաքին գնահատում անկախ փորձագետների խմբի կողմից: Փորձագիտական այցի հիմնական նպատակն է պարզել ինքնավերլուծության մեջ նշված փաստերի և տեղեկատվության հավաստիությունը, ձեռք բերել լրացուցիչ տեղեկատվություն հանդիպումների և հարցումների միջոցով, ուսումնասիրել կրթական գործընթացները և լրացուցիչ փաստաթղթերը՝ ավելի լավ պատկերացնելու փորձաքննության ենթակա ուսումնական հաստատության գործունեությունը: Այսինքն, փորձագետներն իրականացնում են փորձագիտական վերլուծություն, որից հետո տրամադրվում են ձեռքբերումների մասին վկայություններ և խորհրդատվություն՝ աշխատանքների հետագա բարելավման նպատակով:

Երրորդ փուլ. ՈՒԱԿ-ի Հավատարմագրման խորհրդի կողմից վերջնական փորձագիտական զեկույցի պատրաստում և որոշման կայացում:

1. Ինստիտուցիոնալ փորձաքննությունը պարտադիր գործընթաց է թե՛ պետական, թե՛ ոչ պետական հաստատությունների համար: Ինստիտուցիոնալ փորձաքննության նպատակն է.

• որակի բարելավումը և հաշվետվողականության ապահովումը,

• բարձրագույն կրթության բարեփոխումների խթանումը,

• որակի ապահովման գործընթացին բուհերի, այդ թվում նաև պետական, ներգրավման երաշխավորումը: Ինստիտուցիոնալ փորձաքննության շրջանակը հաստատության կրթական ռազմավարության իրականացման ընթացքի և արդյունքների գնահատումն է: Ինստիտուցիոնալ փորձաքննության անցկացման արդյունքներն են. Դրական արդյունքներ՝

• որակյալ կրթության հավաստում,

• որակի ապահովման գործընթացում ներգրավվածության հավաստում: Բացասական արդյունքներ՝

• գործունեության թույլտվության (լիցենզիա) վերահաստատման անհրաժեշտություն:

2. Մասնագիտության կրթական ծրագրի հավատարմագրումը կամավոր գործընթաց է բոլոր բուհերի համար. ա. կրթական ծրագրի հավատարմագրման նպատակն է հաշվետվողականության ապահովումը, ճանաչումը և որակի բարելավումը, բ. հավատարմագրման թիրախը առանձին մասնագիտության կրթական ծրագիրն է, Ծրագրային հավատարմագրման արդյունքներն են.

• պետական ֆինանսավորման հատկացումը. կառավարությունը ֆինանսական միջոցներ կհատկացնի միայն ՈԱԱԿ-ի կողմից հավատարմագրված և պետական գրանցամատյանում գրանցված մասնագիտության կրթական ծրագրերին:

• Որակավորումների և կրեդիտների ճանաչում ազգային և միջազգային մակարդակներում. միայն հավատարմագրված հաստատություններում ձեռք բերված կրեդիտներն են ճանաչվելու և նպաստելու շարժունությանը

• Աշխատաշուկայի ազդակներ. հավատարմագրված որակավորումներն առավելություն են ունենալու աշխատաշուկայում,

Ձեռնարկը մշակված է հետևյալ փաստաթղթերի հիման վրա՝

–ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 30-ի թիվ 959-Ն որոշմամբ հաստատված Մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները,

– ՀԲԻ-ի կանոնադրությունը,

– ՀԲԻ-ի ռազմավարությունը,

– ՀԲԻ -ի գիտական խորհրդի որոշումները:

2. ՀԲԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Առաջնորդվելով Բոլոնիայի գործընթացի հիմնարար փաստաթղթերով, ՀԲԻ - ն որդեգրել է իր կրթական գործունեության և հասարակությանը բժշկական ծառայությունների տրամադրման որակը, մրցունակությունը և գրավչությունն ապահովելու քաղաքականություն: Կրթության որակը տրամադրվող կրթական ծառայությունների համապատասխանությունն է բուհի առաքելությանը և որդեգրած ռազմավարական ծրագրին:

– **Ընդգրկվածություն.** ՀԲԻ-ը կարևորում է Ինստիտուտի ողջ աշխատակազմի, ուսանողների, ինչպես նաև արտաքին շահագրգիռ կողմերի և գործատուների ներգրավումը՝ որակի ապահովման գործընթացները բարելավելու համար: Մասնավորապես, գիտական խորհրդին կից ՈԱ-ի հանձնաժողովում պարտադիր է ուսանողների և գործատուների մասնակցությունը:

– Հաշվետվողականություն և թափանցիկություն. ՀԲԻ -ն կապահովի շահառուներին տրվող տեղեկատվության մատչելիությունը, ճշգրտությունը և կարևորությունը: ՀԲԻ - ի այժմյան գործող կայքը պարբերաբար կթարմացվի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությամբ:

– **Թիմային մոտեցում.** ՀԲԻ -ում գործող որակի ապահովման համակարգը, ընթացակարգերը, մեխանիզմները հասանելի կլինեն ՀԲԻ -ի կառուցվածքային ստորաբաժանումների շահագրգիռ ներկայացուցիչների դիտարկմանը, ուսումնասիրմանը և հետադարձ կապի ապահովմանը, որը կստեղծի ՀԲԻ -ում որակի ապահովման նկատմամբ գործընկերային և թիմային մոտեցման մթնոլորտ:

– **Համակարգային մոտեցում.** ՀԲԻ-ն համապատասխան միջոցառումներով և գործընթացներով կստեղծի որակի ապահովման համակարգ և մշակույթ, համաձայն որի Ինստիտուտի բոլոր ոլորտները՝ ուսումնական, գիտահետազոտական և վարչական, ենթակա են հաշվետցողականության և գնահատման:

ՀԲԻ -ում որակի ապահովումն իրականացվում է Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի կողմից մշակված որակի համակարգային կառավարման քաղաքականության միջոցով՝

-համապատասխան աշխատանքների պլանավորմամբ,

-կազմակերպմամբ և իրագործմամբ,

-ինքնագնահատմամբ,

-վերանայումով և բարելավումով:

3. ՀԲԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ , ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Որակի ապահովման քաղաքականության հիմնական նպատակն է արահովել ՀԲԻ-ի կրթության որակի շարունակական բարելավումը այդ թվում՝

- բարձրացնել ՀԲԻ-ի ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների արդյունավետությունն ու որակը,
- երաշխավորել շնորհվող որակավորումների համար բարձրագույն կրթության ազգային չափորոշիչների ապահովումը:
- ապահովել ուսման վերջնարդյունքների վրա հիմնված որակյալ կրթական համակարգ,
- ապահովել բուհի հաշվետվողականությունը, գործընթացների թափանցիկությունը, տեղեկատվության հասանելիությունը ուսանողներին և գործատուներին՝ ուսման որակի ապահովման և բարձրացման նպատակով,
- երաշխավորել շահառուների բավարարվածությունը,
- նախապատրաստել ինստիտուտը ու կրթական ծրագրերը որակի արտաքին և ներքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին,
- խթանել ՀԲԻ-ում որակի ապահովման մշակույթի զարգացումը:

Խնդիրները՝

- ապահովել կրթական ծրագրերի մշտադիտարկումը, պարբերաբար վերանայումն ու կատարելագործումը,
- իրականացնել կրթական ծրագրերի ներքին և արտաքին գնահատման ու հավատարմագրման գործընթացները,
- կազմել որակի ապահովման համար ՀԲԻ- ում հաշվետվողականության ընթացակարգեր,

- նախաձեռնել որակի ապահովման համար ՀԲԻ-ի հաշվետվողականության գործընթացներ,

- երաշխավորել որակի ներքին ապահովման ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունը,

- ապահովել որակի ներքին գնահատման գործընթացում ուսանողների, շրջանավարտների և գործատուների մասնակցությունը

- առաջարկել անհրաժեշտ նախադրյալներ և խթանող մեխանիզմներ՝ ուսման որակի շարունակական բարձրացման համար

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար ՀԲԻ-ը մշակում և ներդնում է որակի ապահովման և մշտադիտարկման ընթացակարգեր:

4. Հ ԲԻ -Ի ԱՌԱՔԵԼ ՈՒԹՅ ՈՒՆԸ.

Հայկական Բժշկական Ինստիտուտը /ՀԲԻ/ բժշկական ուղղվածություն ունեցող բարձրագույ ն ուսումնական հաստատություն է, որի հիմնական առաքելությունն է՝

- կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում պատրաստել որակյալ բժիշկներ, որոնք կապահովեն բնակչությանը մատչելի, անվտանգ , օգտավետ և նպատակային ծառայություններ.
- ստեղծել նպաստավոր պայմաններ ապագա մասնագետի բազմակողմանի զարգացման, բարձր արհեստավարժությամբ, կուլտուրայով, կրթվածությամբ, սոցիալական ակտիվությամբ և հայրենասիրությամբ օժտվածության ապահովում.
- Մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացում ինստիտուտում առկա կրթական ծրագրերի սահմաններում.

Ելնելով կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից ՝ ՀԲԻ-ը, որպես իր առաքելության կարևորագույն մաս , մշտապես ձգտում է հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտում հասնել գերազանցության , կատարելագործելով և զարգացնելով կրթական, գիտական, սոցիալական , խորհրդատվական, կառավարման և տեղեկատվական համակարգերը, ինչպես նաև սոցիալական ոլորտի և միջազգայնեցման ոլորտներում իրականացվող գործընթացները:

5. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Որակի ապահովման գործընթացների հիմքում ընկած են Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում Որակի ապահովման չափորոշիչներն ու ուղենիշները և ՀՀ

կառավարության 2011թ. հունիսի 30-ի թիվ 959-Ն որոշմամբ հաստատված Մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները:

ՀԲԻ-ի կրթության որակի ապահովման կենտրոնի գործառույթները՝

- Գործում է կառավարման խորհուրդին կից :
- Հանդես է գալիս որպես փորձագիտական և գնահատման կենտրոն, գնահատում է որակի ապահովման ընթացակարգերի ու չափանիշների համապատասխանությունը ընդունված չափորոշիչներին:
- Հաշվետու է գիտական խորհրդին և ինստիտուտի ռեռտորին՝ կատարված աշխատանքների վերաբերյալ պարբերաբար հաշվետվություններ են ներկայացնում վերջիններիս:
- Նախապատրաստում և ռեռկտորի ու գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում որակի ապահովման վերաբերյալ կանոնակարգային, ընթացակարգային ու չափորոշիչ փաստաթղթերը:
- Մշակում է որակի ապահովման ընթացակարգեր՝ կրթական ծրագրերի հաստատման, ընթացիկ հսկողության գործընթացների համար, հետևում և աջակցում է դրանց իրականացմանը բուհի ստորաբաժանումներում:
- Պատասխանատու է և ապահովում է ուսումնառության և դասավանդման որակի գնահատմանն առնչվող գործընթացների համար:
- վերը նշված ընթացակարգերի ներդրումը ուսումնական համակարգում:
- Վերահսկում է ֆակուլտետներում կրթական ծրագրերի պլանավորման, մշակման, փոփոխման և դրանց որակի ապահովման գործընթացների իրականացումը:
- Վերահսկում է ծրագրերի՝ մեթոդական, տեխնիկական և մարդկային ռեսուրսներով պատշաճ ապահովվածությունը: Միաժամանակ վերահսկում է ֆակուլտետների դեկանների կողմից համապատասխան գործառույթների իրականացումը, նաև ապահովում է ֆակուլտետների, գիտական խորհրդի և որակի ապահովման կենտրոնի միջև կապը:

Այս գործառույթները, որին պետք է ուղղվի բուհի որակի ապահովման քաղաքականությունը և ռազմավարությունը, կնպաստեն նպատակների իրականացմանը:

6. ՀԲԻ-ի որակի արահովման համակարգի կազմակերպման կառուցվածքը՝ ՈԱ համակարգում ներգրավված հիմնական ստորաբաժանումներն ու կառույցները և նրանց միջև պատասխանատվությունների բաշխումը հետևյալն է



– **ՀԲԻ -ի որակի ապահովման համակարգի գիտական խորհրդին կից գործող ՈԱ-ի հանձնաժողով.** պատասխանատու է ՈԱ-ի քաղաքականության և հայեցակարգի բարելավմանն ուղղված առաջարկների ուսումնասիրության, կանոնակարգային, ընթացակարգային, չափորոշիչ փաստաթղթերի և կրթական ծրագրերի վերանայման ու ներդրման քննարկման և գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար: Սույն հանձնաժողովում ներկայացված են ՀԲԻ-ի ֆակուլտետների դեկանները, առնվազն երկու առաջատար դասախոս, , երկու ուսանող և գործատուների ներկայացուցիչ: Հանձնաժողովի նախագահը ՀԲԻ -ի ռեկտորն է:

– **Կրթության որակի ապահովման կենտրոնը.** պատասխանատու է ՈԱ-ի քաղաքականության և հայեցակարգի իրագործման, ՈԱ գործընթացների մշտադիտարկման, վերանայման և բարելավման համար:ՈԱ բաժինը համագործակցում է ամբիոնի ՈԱ-ի պատասխանատուի, ՀԲԻ-ում գիտական խորհուրդին կից ՈԱ հանձնաժողովի և ֆակուլտետների/ամբիոնների հանձնաժողովների հետ և հաշվետու է ՀԲԻ ի ռեկտորին: ՈԱ բաժինը պատասխանատու է ՀԲԻ -ի կառուցվածքային ստորաբաժանումներից տվյալների, ինքնագնահատման հաշվետվությունների հավաքագրման և վերլուծության համար: ՈԱ բաժինը վերլուծված տեղեկատվությունը փոխանցում է և ՀԲԻ -ում ՈԱ հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար:

5.3 Ընդհանուր ֆակուլտետային/ամբիոնային մակարդակով ՀԲԻ -ի որակի ապահովման համակարգն ընդգրկում է՝

- **ՀԲԻ -ում որակի կառավարման ֆակուլտետների հանձնաժողովներ/ ամբիոնային պատասխանատու**. պատասխանատու են ֆակուլտետում/ամբիոններում ուսուցման որակի և գործող ծրագրերի վերահսկման ու մշտադիտարկման, նոր ուսումնական ծրագրերի քննարկման, ՀԲԻ մակարդակով ընդունվող որոշումների հետևողական իրագործման հսկողություն ապահովելու համար և մասնագիտական տարբեր տիրույթներում խնդիրների քննարկման, առաջարկությունների ներկայացման, ինչպես նաև անհրաժեշտ ընթացակարգերի և կանոնակարգերի մշակման ու բարելավման համար: Հանձնաժողովում ընդգրկվում են ՀԲԻ -ի ֆակուլտետների և

ամբիոնների ղեկավարները, ուսանողներ, առաջատար դասախոսներ և գործատու, որոնք պատասխանատու են ուսումնական ծրագրերի պլանների, կրթական վերջնարդյունքների, անհրաժեշտ ընթացակարգերի, կանոնակարգերի մշակման, վերանայման և կատարելագործման համար։

Ամբիոնային պատասխանատուն պատասխանատու է ամբիոնի մակարդակով որակի ապահովման ու վերահսկման գործառույթների իրականացման և ամբիոնի կրթական ռազմավարությունից բխող նոր ուսումնական ծրագրերի ներդրման բոլոր գործընթացների կազմակերպման համար, համագործակցում է ՀԲԻ -ի այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ՝ տվյալների հավաքագրման և փոխանցման նպատակով: Վերոնշյալ կառուցվածքային և կազմակերպական միավորներից բացի՝ ՀԲԻ -ի որակի ապահովման համակարգի կառավարման մեջ ներգրավված են ստորաբաժանումների այն բոլոր ղեկավարները (դեկաններ, ամբիոնների վարիչներ, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ), որոնք պատասխանատու են իրենց վերահսկման և կառավարման տիրույթում գտնվող գործունեության արդյունքների համար: ՈԱ-ի բաժնին են տրամադրում իրենց ստորաբաժանմանը առնչվող տվյալները և հաշվետվությունները՝ համապատասխան վերլուծություններ իրականացնելու նպատակով:

– **ՀԲԻ պրոռեկտորները** համակարգում են ԲԲԿ-ն իրենց ենթակայության ուղղությունների շրջանակներում, ունեն պարտականություններ և իրենց մասով պատասխանատվություն են կրում Ինստիտուտում ԲԲԿ-ի իրականացման որակի համար:

– **Դասավանդման մակարդակում** որպես որակի ապահովող, մշտադիտարկող և վերահսկող սուբյեկտ՝ հանդես է գալիս ՀԲԻ -ի յուրաքանչյուր դասախոս:

7. ՀԲԻ -ի որակի կառավարման անհատների և հանձնաժողովներըի հիմնական պարտականությունները .Ինստիտուտի բարձրագույն ղեկավարը՝ ռեկտորը, միաժամանակ հանդիսանում է նաև գիտական խորհրդին կից ՈԱ-ի հանձնաժողովի նախագահը: Նա առաջնորդում է ՀԲԻ-ն՝

– ապահովելով վերջինիս շարունակական զարգացումը և ՈԱ-ի առումով ռազմավարական ուղեգիծը.

– ապահովում է ՀԲԻ -ում ՈՒ-ի քաղաքականության, հայեցակարգի, ընթացակարգերի և գործընթացների առկայությունը և դրանց շարունակական բարելավումը.

– ապահովում է ՀԲԻ-ի առաքելության և ռազմավարական հիմնախնդիրների առկայությունը ՀԲԻ-ում ՈՒ-ի քաղաքականությունում և հայեցակարգում.

– ապահովում է ՀԲԻ-ի որակի ապահովման քաղաքականության և հայեցակարգի իրագործումը.

–սահմանում է բարուրագույն բժշկական կրթության(ԲԲԿ) որակի ապահովման ուղղությամբ Ինստիտուտում աշխատանքների կազմակերպման, ղեկավարման և ապահովման սկզբունքները.

– ապահովում է ՀԲԻ-ի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող գործառութային և ընթացակարգային գործընթացները.

–ստեղծում և ապահովում է պայմաններ, որոնք խթանում են Ինստիտուտի ողջ անձնակազմի և ուսանողների ներգրավումը ՀԲԻ-ի որակի համակարգի ներդրման աշխատանքներում:

ՀԲԻ-ի ֆակուլտետների դեկանները. Պատասխանատու են ՀԲԻ-ում որակի ապահովման համար և անկախ իրենց պաշտոնեական պարտականություններից՝ ղեկավարության առաջ պատասխանատվություն են կրում իրենց ֆակուլտետային տիրույթում գտնվող որակի համակարգի ապահովման պահանջների կատարման համար: Ֆակուլտետի դեկանը.

- պատասխանատու է իր մասնագիտական տիրույթում իրականացվող կրթական ծրագրերի մշակման և պատշաճ իրագործման համար.

- ապահովում է իր մասնագիտական տիրույթում գտնվող կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների համապատասխանությունը Որակավորումների ազգային շրջանակին.

- ապահովում է իր մասնագիտական տիրույթում գտնվող կրթական ծրագրերին առնչվող տեղեկատվության մատչելիությունը և հրապարակայնությունը.

- ամբիոնների վարիչների հետ համատեղ մշակում է ֆակուլտետի զարգացման ռազմավարական կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր.

- ապահովում է իր մասնագիտական տիրույթում գտնվող կրթական ծրագրերի համապատասխանությունը ֆակուլտետի ռազմավարական ծրագրի խնդիրներին.վերահսկում և համակարգում է ֆակուլտետի կողմից տրամադրվող ծառայությունների պատշաճ որակը.

- մասնակցում է կադրային ռեսուրսների հավաքագրմանը, ինչպես նաև մշակում պրոֆեսորադասախոսական համակազմի կատարելագործումը խթանող միջոցառումներ.

- միջնորդ է հանդիսանում ամբիոնների վարիչների ու ՈԱ պատասխանատուների և ՀԲԻ -ի ղեկավարության ու Կրթության որակի ապահովման բաժնի.

- համակարգում է իր ստորաբաժանման մակարդակով վարչական, գործառնական և այլ հատուկ աշխատանքները ՈԱ ուղղությամբ.

- համագործակցում է իր մասնագիտական տիրույթում այլ բուհերի համապատասխան ստորաբաժանումների հետ՝ կրթական ծրագրերի բարելավման նպատակով.

- կազմակերպում և ապահովում է համագործակցությունը ինչպես իր ենթակայության ստորաբաժանման աշխատակազմի, այնպես էլ Ինստիտուտի այլ՝ արտաքին և ներքին շահառուների հետ: Ամբիոնի վարիչը հաշվետու է ֆակուլտետի դեկանին և ՀԲԻ -ի ռեկտորին/պրոռեկտորին և իրականացնում իր կրթական ծրագրերի ընդհանուր կառավարումը: Մասնավորապես՝

– իրականացնում է կրթական ծրագրի կազմակերպումը. ապահովում է կրթական ծրագրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը.

–ապահովում է կրթական ծրագրի վերջնարդյունքները և դրանց համապատասխանությունը Որակավորումների ազգային շրջանակին և կրթական ծրագրի մասնագրին, ակտիվորեն մասնակցում է որակի ապահովման գործընթացներին՝

– հետադարձ կապ է ապահովում ուսանողների և դասախոսների կողմից իր կողմից կառավարվող կրթական ծրագրի վերաբերյալ, գնահատման համակարգի, դասավանդման և ուսուցման մեթոդաբանության, առկա ռեսուրսների, դասախոսական համակազմի պատրատվածության վերաբերյալ.

– մշակում է խրախուսական համակարգ՝ իր կրթական ծրագրի ներքո դասավանդող դասախոսների խրախուսման և առաջխաղացման նպատակով.

– ֆակուլտետի դեկանին է ներկայացնում կրթական ծրագրի մշտադիտարկման արդյունքում ի հայտ եկած խնդիրները և լավագույն փորձը.

– մշակում և ֆակուլտետի դեկանին է ներկայացնում հիմնավորումներ և տեղեկատվություն նոր կրթական ծրագրի մշակման և իրագործման վերաբերյալ.

– ակտիվորեն մասնակցում է պարբերական և տարեկան մշտադիտարկումներին, կազմակերպում է կրթական ծրագրի ինքնագնահատման հաշվետվության պատրաստումը և կրթական ծրագրի արտաքին գնահատման աշխատանքները.

–կազմակերպում է աշխատանքային հանդիպումներ իր կրթական ծրագրի ներքո դասավանդող դասախոսական համակազմի և ուսանողների ներկայացուցիչների հետ՝ կրթական ծրագրի հետ առնչվող խնդիրները քննարկելու և լուսաբանելու նպատակով.

– մշակում է ժամանակացույց և նշանակում պատախանատուներ դասալսումների, ուսանողների մնայուն գիտելիքների ստուգման, ուսանողների հետ քննարկումների միջոցով կրթական ծրագրի մշտադիտարկումը ապահովելու նպատակով:

Ամբիոնի ՈԱ-ի պատասխանատուն հաշվետու է ամբիոնի վարիչին և ֆակուլտետի դեկանին և իրականացնում է ՈԱ-ի ապահովման անհրաժեշտ գործավարական ու գործառական աշխատանքներ: Ամբիոնի ՈԱ-ի պատասխանատուն նշանակվում է համապատասխան ֆակուլտետի դեկանների կարգադրությամբ՝ ամբիոնի վարիչի ներկայացմամբ:

Ամբիոնի ՈԱ-ի պատասխանատուն.

– տրամադրում է ամբիոնի վարիչին տեղեկատվական, մեթոդական, կազմակերպական օգնություն ՀԲԻ -ի որակի բնագավառում ամբիոնի աշխատանքների պլանավորման, կազմակերպման, վերահսկման, գնահատման, մշտադիտարկման, վերլուծության հարցում, այդ թվում՝ նաև իրականացնում է ամբիոնի վարիչի կողմից հանձնարարված վերահսկման, կազմակերպական աշխատանքները.

– պատասխանում բոլոր շահառուների հարցադրումներին.

–իրականացնում է տվյալ կրթական ծրագրով դասավանդող դասախոսական համակազմի գործունեության արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և գրանցումը.

– իրականացնում է ուսանողների վերաբերյալ տեղեկատվության գրանցումը՝ ներառյալ ուսանողների առաջադիմությունը, շարժունությունը, առաջխաղացումը և այլն.

– գրանցում և ամբիոնի վարիչին է ներկայացնում ուսումնական տարվա ընթացքում ուսանողներից և դասավանդող դասախոսական կազմից հետադարձ կապի միջոցով ստացված տեղեկատվությունը.

–կազմակերպում է կրթական ծրագրի արդյունավետության հետ կապված հետազոտություններ՝ արտաքին և ներքին շահառուների ներգրավմամբ.

– ամբիոնի վարիչի հետ մեկտեղ կազմակերպում և համակարգում է կրթականծրագրի ինքնագնահատման աշխատանքները.

Կրթության որակի ապահովման կենտրոնը հաշվետու է ՀԲԻ -ի ռեկտորին և.

- իրականացնում է ՀԲԻ -ում որակի ապահովման պահանջների ձևակերպումը, մշակումը և ներդրումը.

–համակարգում է ՀԲԻ -ում որակի ապահովման քաղաքականության և հայեցակարգի իրագործումը կառուցվածքային ստորաբաժանումների կողմից.

–կազմակերպում է ՀԲԻ -ում ՈԱ-ի ընթացակարգերի կիրառման և իրագործման վերաբերյալ մշտադիտարկում.

– համագործակցում է ՀԲԻ -ի կառուցվածքային ստորաբաժանումների հետ և հետադարձ կապի միջոցով վերանայում և բարելավում են ՀԲԻ -ում ՈԱ-ի քաղաքականությունը, հայեցակարգը և ՈԱ-ի ընթացակարգերը.

–կազմակերպում է լուսաբանման սեմինարներ և վերապատրաստումներ՝ ՀԲԻ -ի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներին ՈԱ-ի քաղաքականության, հայեցակարգի, ընթացակարգերի փոփոխությունների վերաբերյալ տեղեկացնելու, կարողությունները հզորացնելու նպատակով. ՀԲԻ -ի կառուցվածքային ստորաբաժանումներից հավաքում և վերլուծում է ՀԲԻ– ում կրթական ծառայությունների և գործընթացների կազմակերպման վերաբերյալ

անհրաժեշտ տեղեկատվությունը, կատարում քանակական և որակական վերլուծություններ.

– վերլուծությունների հիման վրա ֆակուլտետային հանձնաժողովի հետ մշակում համապատասխան առաջարկներ և ներկայացնում գիտական խորհրդին կից գործող ՈԱ-ի հանձնաժողովին՝ համապատասխան որոշումներ կայացնելու համար.

– ներկայացնում է հաշվետվություն ռեկտորին ՀԲԻ -ում որակի համակարգի կենսագործունեության և այն կատարելագործելու վերաբերյալ.

- հետադարձ կապի միջոցով կազմակերպում է բաժնի գործունեության արդյունավետության ուրույն ինքնագնահատում, վերլուծում արդյունքները և բարելավում բաժնի գործունեության ընթացակարգերը և գործընթացները.

- կազմակերպում է որակի ներքին փորձագիտություն և դրա արդյունքների հիման վրա ֆակուլտետային հանձնաժողովի հետ մշակում միջոցառումների ծրագիր՝ որակը բարձրացնելու նպատակով.

- կազմակերպում է այլ բուհերի հետ փորձի փոխանակում ՈԱ շրջանակներում գործունեության խնդիրների վերաբերյալ.

- հավաքում և ամփոփում է կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացրած ինքնագնահատման տարեկան հաշվետվությունները և ներկայացնում ՀԲԻ -ի ռեկտորին:

ՀԲԻ -ի գիտական խորհրդին կից ՈԱ-ի հանձնաժողովը (այսուհետ՝ ՈԱ հանձնաժողով) ՀԲԻ -ում որակի համակարգի բարձրագույն համակարգող – խորհրդատվական և փորձագիտական կոլեգիալ մարմին է: ՈԱ-ի հանձնաժողովը գործում է՝ աջակցելու ՀԲԻ -ի ղեկավարությանը, ինչպես նաև Ինստիտուտի գիտական խորհրդին՝ որակի համակարգի հետ կապված խնդիրների լուծման համար: ՀԲԻ -ի ՈԱ հանձնաժողովի ձևավորման և գործունեության մասին կարգը սահմանվում է ՀԲԻ-ի կողմից մշակված դրա մասին Կարգով: ՀԲԻ ՈԱ հանձնաժողովը կհավաքվի տարեկան մեկ անգամ և .

- կուսումնասիրի կրթական ծրագրի իրագործումը և զարգացումը և ՝ ներառյալ գնահատումն ու դասավանդման մեթոդաբանությունը ՝ համաձայն ՀԲԻ -ի որդեգրած քաղաքականության և ընթացակարգերի.

- փաստաթղթերի և տարեկան հաշվետվությունների ուսումնասիրության հիման վրա կիրականացնի ՀԲԻ-ում ՈԱ-ի ընթացակարգերի իրագործման պարբերական մշտադիտարկում.

- կապահովի ուսանողներին տրամադրվող աջակցության և ծառայությունների պատշաճ որակը.

- կքննարկի և կմշակի ուղենիշներ՝ ՀԲԻ-ում հետազոտության զարգացման և ուսանողներին հետազոտական աշխատանքներում առավել արդյունավետ ներգրավման համար.

- կծանոթանա ՀԲԻ-ում ՈԱ-ի քաղաքականության և հայեցակարգի իրականացման մանրամասներին,

- կքննարկի ՀԲԻ-ի կրթության զարգացման և որակի ապահովման վարչության ներկայացրած ինքնագնահատման ամփոփ հաշվետվությունը և կհաստատի այն.

- կքննարկի Կրթության զարգացման և որակի ապահովման վարչության ներկայացրած առաջարկները և դիտողությունները՝ ՀԲԻ-ում ՈԱ-ի համակարգը բարելավելու նպատակով.

- կուսումնասիրի ՀԲԻ -ում ՈԱ-ի ֆակուլտետային հանձնաժողովի կողմից ներկայացված նոր կրթական ծրագրերի և/կամ գործող կրթական ծրագրերի վերաբերյալ առաջարկները.

- կկայացնի համապատասխան որոշումներ ՀԲԻ -ում ՈԱ-ի գործընթացները բարելավելու/կատարելագործելու ուղղությամբ.

- կքննարկի և կհաստատի կրթության որակի ապահովման բաժնի կողմից ներկայացրած ընթացակարգերը և կանոնակարգերը.

- կքննարկի և կրթության ՈԱ կենտրոնին կներկայացնի առաջարկություններ ՀԲԻ -ում ՈԱ-ի հետագա բարելավման ուղղությունների վերաբերյալ, ինչպես նաև ֆակուլտետային հանձնաժողովին տրված կրթական ծրագրերի և կրթական գործընթացի կազմակերպման վերաբերյալ հանձնարարականները: Ֆակուլտետային ՈԱ հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է դրանց նկատմամբ պահանջներով, որոնք մշակվում են ՀԲԻ -ի որակի համակարգի

փաստաթղթերի ձևակերպման շրջանակներում: Հանձնաժողովը հաշվետու է ՀԲԻ -ի ռեկտորին և ՈԱ-ի հանձնաժողովին:

Հանձնաժողովի հիմնական գործառույթներն են՝

- ֆակուլտետի որակի մշտադիտարկման պարբերական իրականացում,
- ֆակուլտետի՝ որակի անհամապատասխանության պատճառները և դրանց վերացման առաջարկությունների պատրաստումը,
- ֆակուլտետների կատարելագործման վերաբերյալ առաջարկներ,
- ֆակուլտետների որակի համար միջոցառումների ծրագրի մշակում,
- ԿԾ որակի վերահսկմանն առնչվող հարցերի նախնական մշակում և քննարկում,
- ֆակուլտետների խորհրդի որոշումների իրականացման կազմակերպում և վերահսկում,
- ֆակուլտետների որակի վերահսկմանն ուղղված կարգավորող միջոցառումների անցկացման կազմակերպում,
- որակի բնագավառում ֆակուլտետի աշխատանքի մասին տարեկան հաշվետվության քննարկում և ներկայացում:

Ուսանողների ներկայացուցիչ

Յուրաքանչյուր ուսումնական տարի յուրաքանչյուր ֆակուլտետում ներգրավված ուսանողները ընտրում են մեկ ուսանող՝ իրենց տեսակետները ֆակուլտետային ՈԱ-ի հանձնաժողովում ներկայացնելու և խնդիրները բարձրացնելու: Ֆակուլտետային հանձնաժողովի առաջադրմամբ ընտրված ուսանողներից երկուսն ընդգրկվում են գիտական խորհրդին կից ՈԱ-ի հանձնաժողովում:

ՀԲՒ-Ի ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԲՒ-ի շարունակական բարելավման գործողությունների ուղղությամբ նախատեսվող և իրականացվող հարցումները և հարցաթերթիկների ձևաթերթերը.

1.ՀԲՒ-ի ռեսուրսների կարիքները և խնդիրները բացահայտելու համար ՀԲՒ-ի գիտական գրադարանից ուսանողների և դասավանդողների բավարարվածության վերաբերյալ հարցում: Հարցումն անցկացվում է գրադարանից ավելի հաճախ օգտվող ուսանողներ և դասախոսների շրջանում փակ հարցերի անանուն հարցափերփիկների օգնությամբ /Ձև1 հարցաթերթիկ/:

2.Ուսանողների կողմից դասընթացների որակի գնահատման նպատակով հարցում: Հարցումն անցկացվում է բուժական ֆակուլտետի 2, 3 և 4-րդ կուրսերում , իսկ ստոմատոլոգիական ֆակուլտետում 2 և 3-րդ կուրսերի ուսանողների շրջանում յուրաքանչյուր դասընթակի ավարտվելու հաջորդ սեմեստրի լիկվիդացիոն շրջանի ավարտից հետո փակ հարցերի անանուն հարցաթերթիկների օգնությամբ /Ձև 2/:

3. Մասնագիտական կրթական ծրագրերի որակի վերաբյալ շրջանավարտների բավարարվածությունը ստուգող հարցում: Հարցումն անցկացվում է բուժական ֆակուլտետի 5-րդ կուրսի բակալավրիատի շրջանավարտների և մագիստրատուրայի 2-րդ կուրսի շրջանավարտների , իսկ ստոմատոլոգիական ֆակուլտետում 4-րդ կուրսի բակալավրիատի շրջանավարտների և մագիստրատուրայի 2-րդ կուրսի շրջանավարտների շրջանում: Հարցումն անցկացվուն է փակ հարցերի անանուն հարցաթերթիկների օգնությամբ:

Հաստատված է՝
ՀԲԻ-ի ռեկտորատի
28.08.2013թ նիստում

Ռեկտոր՝ Լ.Վ.Անդրիասյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հայկական բժշկական ինստիտուտի նյութատեխնիկական և մեթոդական հագեցվածությամբ դասավանդողների եվ ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցում-գնահատման

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Դասավանդողների և ուսանողների նյութատեխնիկական և մեթոդական հագեցվածությամբ բավարարվածության վերաբերյալ հարցման –գնահատման կարգը սահմանում է ՀԲԻ-ի կրթական ծառայությունների համար հատկացված նյութատեխնիկական և մեթոդական հագեցվածության որակի գնահատման կարգը։

2. ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ և ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

2.1. Դասավանդողների և ուսանողների հարցումն իրականացվում է գրադարանից ավելի հաճախ օգտվող ուսանողներ և դասախոսների շրջանում փակ հարցերի անանուն հարցափերփիկների օգնությամբ։

2.2. Դասավանդողների և ուսանողների ուս. տարվա վերջում ստանում են հարցաթերթերթերթերը, լրացնում և հանձնում որակի ապահովման բաժին։

2.3. Հարցումն անանուն է։

2.4. Դասավանդողների և ուսանողների հարցումն իրականացվում է սույն կանոնակարգին կից հարցաթերթերով (ձև1)։

2.5. Դասավանդողների և ուսանողների հարցումն և արդյունքների մշակումն իրականացվում է ՀԲԻ-ի որակի ապահովման կենտրոնի կողմից։

2.6. Հարցաթերթում կատարված ուղղումները չեն հաշվարկվում։

2.7.Դասավանդողների և ուսանողների հարցման արդյունքները քննարկվում են ՀԲԻ-ի ստորաբաժանումներում (ամբիոն, դեկանատ, ռեկտորատ), որակի բարելավման միջոցառումներ մշակելու և իրականացնելու համար։

2.8.Հարցման փաստաթղթերը որակի ապահովման բաժնում պահպանվում են 5 տարի, որից հետո համապատասխան կանոնակարգով արխիվացվում են։

Ձև1

ՀԱՐՑԱԹԵՐԹ

ՀԲԻ ԳՐԱԴԱՐԱՆԻՑ ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի՛ դասախոս/ուսանող, Դուք մասնակցում եք գրադարանից բավարարվածության վերաբերյալ հարցմանը, ինչը կարևոր է գրադարանի ծառայությունների արդյունավետությունը բավարարելու համար:

Գնահատեք 2-5 միավորանոց սանդղակով՝
2-անբավարար
3-բավարար
4-լավ
5-գերազանց
Այս հարցումն անանուն է:

N	Հարցադրում	Միավոր
1.	Պահանջվող մասնագիտական գրականության տրամադրում	
2.	Պահանջվող արդիական մասնագիտական գրականության տրամադրում	
3.	ՈՒսումնա-մեթոդական ձեռնարկների առկայությունը	
4.	Էլետրոնային գրականության առկայություն	
5.	Համացանցի հասանելիություն	
6.	Բավարարվածությունը աշխատակազմի սպասարկման որակից	
7.	Բավարարվածությունը ընթերցասրահի կահավորանքից	
8.	Բավարարվածությունը գրադարանի և ընթերցասրահի աշխատանքային ժամերը	

Առաջարկություններ՝ _____
_____
_____
_____
_____
_____

ՈԱԿ-ի տեսուչ՝

Գրադարանի տնօրեն՝

ՀԲԻ ՈՒԽ-ի նախագահ՝

Ձև1-ի ամփոփաթերթ

ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

ՀԲԻ ԳՐԱԴԱՐԱՆԻՑ ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.Հարցմանաը մասնակցել են (մասնակիցների քանակը)՝

դասախոս	ուսանող

N	Հարցադրում	Միջին միավոր	Առաջարկություններ
1.	Պահանջվող մասնագիտական գրականության տրամադրում		
2.	Պահանջվող արդիական մասնագիտական գրականության տրամադրում		
3.	ՈՒսումնա-մեթոդական ձեռնարկների առկայությունը		
4.	Էլետրոնային գրականության առկայություն		
5.	Համացանցի հասանելիություն		
6.	Բավարարվածությունը աշխատակազմի սպասարկման որակից		
7.	Բավարարվածությունը ընթերցասրահի կահավորանքից		
8.	Բավարարվածությունը գրադարանի և ընթերցասրահի աշխատանքային ժամերը		

ՈԱ կենտրոնի ղեկավար՝

201 թ

Ձև 2

ՔԱՐՏ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԴԱՍԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Դասախոսի Ա.Ա.Հ. _____

Ամբիոն_____

Դասի տեսակը_____ներկա են_____ից_____ը

1. Նյութի մատուցման ժամանակ պահպանվում էր տրամաբանական հաջորդականությունը:

   1☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐5 ☐

2. Բավարար չափով ներկայացված էր դասի թեման:

   1☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐5 ☐

3. Ճիշտ էր կազմված դասի կառուցվածքը ժամանակի առումով:

   1☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐5 ☐

4. Կարողանում էր արդյ՞ոք պահել լսարանը ակտիվ ճանաչողական պրոցեսում:

   1☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐5 ☐

5. Նյութը մատուցելիս ստեղծում էր կապ ապագա մասնագիտության (կլինիկայի) հետ:

   1☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐5 ☐

6. Նյութը մատուցվում էր ընկալելի տեմպով:

   1☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐5 ☐

7. Ընդգծում էր արդյո՞ք նյութի կարևոր և բարդ հատվածները:

   1☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐5 ☐

8. Կիրառու՞մ էր ցուցադրական նյութեր:

   1☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐5 ☐

9. Կառավարում էր լսարանը:

   1☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐5 ☐

10. Ճիշտ էր ընտրված դասի վարման մեթոդաբանությունը:

    1☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐5 ☐

11. Ուներ արդյո՞ք պատշաճ մակարդակ (խոսքի մշակույթ, վարք, էմոցիոնալություն):

    1☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐5 ☐

12. Ինչպե՞ս կգնահատեք ընդհանուր առմամբ դասի որակը:

    1☐ 2 ☐ 3 ☐ 4 ☐5 ☐

Ձեր առաջարկները և դիտողություններ

_____

_____

_____

Փորձագետի Ա.Ա._____

Գիտամանկավարժական աստիճան_____201 թ.

Հաստատված է՝
ՀԲԻ-ի ռեկտորատի
28.08.2013թ նիստում

Ռեկտոր՝ Լ.Վ.Անդրիասյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Առարկայական նկարագիրը ուսումնական ծրագրի ուսումնամեթոդական փաթեթի ուսանողական լսարան ներկայացվող փաստաթուղթն է, որը կազմվում է յուրաքանչյուր դասախոսի կողմից՝ ելնելով հաստատված հիմնական աշխատանքային ծրագրի պահանջներից:

Սույն հիմնադրույթը մշակվել է ուսումնամեթոդական փաթեթի այն մասը կազմելու համար, որը կծառայի որպես ուսանողի և դասախոսի շփման միջոց տվյալ առարկայի ուսումնասիրման ընթացքում: Ուսանողն առարկայական նկարագրից պետք է պատկերացում կազմի առարկայի բովանդակության, կառուցվածքի, նպատակների, խնդիրների, մեթոդների, գիտելիքների, կարողությունների, ունակությունների, ընդհանրական և մասնագիտական կոմպետենցիաների եզրույթներով արտահայտված վերջնական արդյունքների և գնահատման մեթոդների ու չափանիշների մասին: Առարկայական նկարագիրը պետք է պարունակի սպառիչ տեղեկություն դասախոսի, նրա կոնտակտային տվյալների (հեռախոս, e-mail, web-site) և խորհրդատվությունների գրաֆիկի մասին:

ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ.

- գիտելիքների, կարողությունների, ունակությունների և կոմպետենցիաների սահմանումը, որոնք ուսանողը պետք է ձեռք բերի տվյալ առարկան յուրացնելիս.
- ուսումնասիրած պարտադիր առարկաներիցանկը, որոնց ուսումնասիրման ընթացքում ստացած գիտելիքները, կարողությունները և ունակությունները տվյալ առարկան յուրացնելու համար հիմք են) անհրաժեշտ պայմանները
- վերջնարդյունքի սահմանումը (վերջնական արդյունքները նկարագրելու համար անհրաժեշտ է նշել գիտելիքները, կարողությունները, ունակությունները և

կոմպետենցիաները, որոնք պետք է ձևավորվեն տվյալ առարկան ուսումնասիրելուց հետո):

• կառուցվածքի և առարկայի նկարագրի բովանդակության բացահայտումը,

• ուսումնական առարկայի ժամերի ծավալի բաշխումը,

• ուսումնական առարկայի տիրապետման մակարդակի գնահատման ձևի որոշումը:

ԱՌԱՐԿԱՅԻ ՆԿԱՐԱԳՐԻ ՈՐԱԿԸ

Առարկայի նկարագիրը պետք է՝

• համապատասխանի բարձրագույն մասնագիտական պետական կրթական չափանիշների առնվազն նվազագույն բովանդակության պահանջներին,

• բացահայտի ուսումնասիրվող առարկայի բաժինների հերթականությունը և համապատասխան դեդուկցիոն միավորների բովանդակությունը,

• համապատասխանի գիտության և կրթության, դասավանդման մեթոդների ժամանակակից պահանջներին,

• որոշ դասընթացի ուսումնասիրության նպատակներն ու նրա տեղն ուսումնասիրվող մասնագիտական առարկաների համակարգում:

ԱՌԱՐԿԱՅԻ ՆԿԱՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

• առարկայի նկարագրի կառուցվածքը պետք է համապատասխանի ուսումնական առարկայի աշխատանքային ծրագրի պահանջներին ու չափանիշներին:

• Առարկայի նկարագրի տիտղոսաթերթը պետք ներառի հետևյալ տվյալները.

1. հղում,

2. ամբիոնի և բաժնի անվանում,

3. առարկայի անվանում,

4. նկարագրի դասիչն ու անվանումը, մասնագիտությունը,

5. հեղինակ/հեղինակներ, ԱԱՀ, գիտական աստիճան, կոչում:

ՆԿԱՐԱԳԻՐԸ ՊԵՏՔ Է ՆԵՐԱՌԻ ՀԵՏԵՎՅԱԼԸ.

• տվյալ առարկայի համառոտ նկարագիրը, նրա առանձնահատկությունները, տեղը և դերը՝ որպես բարձրագույն մասնագիտական կրթության կրթական-մասնագիտական աստիճանի բաղադրամաս,

• գիտելիքների և կարողությունների մակարդակը, որոնք ուսանողը պետք է ունենա տվյալ առարկան ուսումնա- սիրելու համար,

• առարկայի ուսումնական նպատակներն ու խնդիրները,

• առարկայի յուրացման պահանջների մակարդակը՝ որպես ուսումնասիրման արդյունք,

• առարկայի ծավալը և ուսանողների աշխատանքի ձևերը՝ դասախոսություններ, սեմինարներ, լաբորատոր և գործնական պարապմունքներ, կուրսային աշխատանք-ներ, , տնային հանձնարարություններ, ստուգողական աշխատանքներ և այլն, որոնք նախատեսված են ուսումնական առարկայի աշխատանքային ծրագրով,

• ստուգման ձևերը՝ ընթացիկ, միջանկյալ, ամփոփիչ,

• ընթացիկ, միջանկյալ, ամփոփիչ գնահատականների ձևակերպման մեթոդիկա,

• հեղինակի այլ բացատրություններ,

• առարկայի նկարագրի բաղադրիչն է օրացույցային պլանը, որը պետք է ձևավորված լինի աղյուսակի տեսքով և տեղեկացնի թեմատիկ բովանդակության բաշխումն ըստ շաբաթների, դասավանդման ձևը, ուսումնառության եղանակը և գնահատման ձևը,

• Առարկայի բովանդակությունը պետք է բաշխված լինի մոդուլների՝ իրենց բաժիններով և թեմաներով,

• Նկարագրի ուսումնամեթոդական ապահովումը պետք է ներառի գրականության ցանկը, ծրագրային և նյութատեխնիկական միջոցներն առարկան յուրացնելու հա-մար,

• Գրականության ցանկը պետք է բաժանվի հիմնական և այլ գրականություն հատվածների։

Առարկայի նկարագրերը հաստատվում են ամբիոնների նիստերում, բոլոր հաստատված նկարագրերը՝ տպագիր և էլեկտրոնային տարբերակներով, պետք է լինեն հասանելի ուսանողներին առարկայի դասավանդման նախորդող շաբաթվա ընթացքում և պետք է հրապարակվեն ՀԲՒ-ի կայքում:

Ռեկտոր Լ.Վ.Անդրիասյան